ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 23-Ա

<<17>> փետրվարի 2025 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՎԱՔԱՐԱՐ (ՄԱՔՐՈՒՀԻ) ՌԻՏԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի, <<Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով <<Ախուրյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից 2025 թվականի փետրվարի 14-ին տրված՝ սերիա ZX N 038375 անաշխատունակության թերթիկը

հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի հավաքարար (մաքրուհի) Ռիտա Սերգեյի Մարտիրոսյանին 2025 թվականի փետրվարի 04-ից մինչև 2025 թվականի փետրվարի 14-ը՝ ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար նշանակել ժամանակավոր անաշխատունակության նպաստ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկումն ու վճարումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

<<17>> փետրվարի 2025 թվական
Գյուղ Ախուրյան